# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար պիլոտային /փորձնական/ ծրագրով ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» սեպտեմբերի 2017թ.
ժամը՝ 16:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Եղիազարյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության պետ,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.**

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

2. **Տեղեկատվություն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության գնահատման արդյունքում արձանագրվել է, որ ներկայացված փաստաթղթերում բացակայում է «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

3. **Տեղեկատվություն՝ Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/ հարցում ներկայացնելու և հարցման մասին տրամադրված եզրակացության վերաբերյալ.**

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն համապատասխան հարցում է ներկայացվել Կոմիտե, Կոմիտեից սահմանված ժամկետում տրամադրվել է եզրակացությունը:

Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության գնահատման արդյունքում արձանագրվել է, որ «Մեգապոլիս Լաք» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում «Մեգապոլիս Լաք» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկից՝ հանրագումարը 0 է:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

-հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017թ. սեպտեմբերի 14-ին ժամը՝ 10:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

-հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. սեպտեմբերի 13-ը ներառյալ, շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

Սարգիս Արմենակյան

Գրիգոր Գաբրիելյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

**<<ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01>> ծածկագրով**
**ընթացակարգի գնահատող հանձնաժողովի**
**քարտուղար Արուս Խաչատրյանին**

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի համաձայն էլեկտրոնային եղանակով տրամադրված փաստաթղթերի հիման վրա «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի հայտի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության գնահատման նպատակով արտահերթ նիստ հրավիրել 2017 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը 16:30-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝

Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

**12.09.2017թ.**